

ԷՐՏՈՂԱՆԻ 23 ԱՊՐԻԼԻ ՈՒՂԵՐՁԸ

Posted on May 1, 2014 by Keghart



Category: [Opinions](#)



Օշին Էլակեօզ, Մարմարա, Պոլիս, 28 Ապրիլ 2014

Ապրիլ 23-ին երբ Թուրքիոյ մէջ կը տօնուէր Ազգային Գերիշխանութեան տօնը եւ հետաքրքրութեամբ կը սպասուէր 24 Ապրիլին ԱՄՆի Նախագահ Օպամայի 1915-ի դէպքերու մասին ընելիք յայտարարութիւնը. Վարչապետարանի պաշտօնական կայքէջէն հրապարակուեցաւ Վարչապետ Էրտողանի ուղերձը, որուն մէջ ան ցաւակցութիւն կը յայտնէր Հայերուն 1915-ի դէպքերու ընթացքին զոհուած հայերուն համար:

Այս ուղերձը ռումբի ազդեցութիւն գործեց ոչ միայն Թուրքիոյ մէջ, այլ համայն աշխարհի վրայ, որովհետեւ Թուրքիոյ վարչապետի մը կողմէ 1915-ի դէպքերու մասին եղած այս յայտարարութիւնը շատ աւելի կարեւոր էր քան թէ ԱՄՆի Նախագահինը:

Այս ուղերձէն վերջ ծանր քննադատութիւններ կատարուեցան որոշ Հայկական կազմակերպութիւններու եւ մտաւորականներու կողմէ: Անոնք կը քննադատէին Էրտողանը ըսելով թէ ան Նոր բան մը չէր ըսած եւ իր ըսածները Թուրքիոյ կողմէ 1915-ի դէպքերու մասին մինչեւ այսօր եղած պետական յայտարարութիւններու վրայ Նոր բան մը չէին աւելցներ:

Ճիշտ էր որ վարչապետին ուղերձին մէջ կային մասամբ մինչեւ այսօր կրկնուած յայտարարութիւններ ալ, բայց կային նաեւ մինչեւ հիմա ոչ մէկ թուրք քաղաքագետի կողմէ եղած յայտարարութիւններ եւս:

Ինչու՞ կառչած մնանք տարիներէ ի վեր կրկնուած յայտարարութիւններուն եւ չկեդրոնանանք Նորերու վրայ:

Քանի մը քայլ ետ երթանք, որպէսզի աւելի լայն անկիւնէ մը դիտենք ընդհանուր պատկերը եւ տեսնենք թէ ի՞նչ Նոր նշանակութիւններ կային իր ուղերձին մէջ:

- 91 տարուայ Թուրքիոյ հանրապետութեան պատմութեան մէջ առաջին անգամն էր որ վարչապետ մը ցաւակցութիւն կը յայտնէր <<**ուղղակիօրէն**>> հայերուն, 1915-ի դէպքերու ժամանակ զոհուածներու յետնորդներուն:

- Առաջին անգամն էր որ թուրք վարչապետ մը կը յայտարարէր թէ «**Հայեր իրաւունք ունին իրենց վիշտը ազատօրէն ոգեկոչելու, իսկ անոնց մասնակցիլը մարդկային պարտականութիւն մըն է**»:

- Առաջին անգամ ըլլալով Վարչապետի մը կողմէ ընդունուած եղաւ որ, 1915 ին աքսորի ենթարկուած Հայերուն մէջը գտնուած պայմանները <<**անմարդկային էին, եւ անոնք այս պատճառաւ է որ մեռան**>>: Մինչդէռ մինչեւ այսօր պետական թէգերը պաշտպանողները կըսէին թէ, աքսորեալներու համար ամեն թիւրութիւն մտածուած էր, իրենց ճամբու ծախսն անգամ պետութեան կողմէ ապահովուած էր: իսկ մեռնողները հիւանդութեան պատճառով է որ մեռած էին:

- Յայտարարութեան մէջ Վարչապետի մը կողմէ կը նշուէր թէ 24 Ապրիլը բոլոր Հայերու համար <<**յատուկ նշանակութիւն**>> մը ունի:

- Առաջին անգամ ըլլալով կը նշուէր թէ, այս հողերու վրայ ապրող ժողովուրդներուն պատմութեան մէջ անոնց կրած տառապանքները իրարու հետ բաղդատել կամ զանոնք իրարու հետ մրցակցութեան մէջ դնելը սխալ վարուելակերպ մըն էր: Մինչդէռ մինչեւ այսօր 1915-ի դէպքերը

Կ'ընդունուէին իբրեւ պատերազմի ժամանակ եղած փոխադարձ սպանութիւններ:

- Առաջին անգամ ըլլալով թուրք վարչապետ մը յայտարարեց թէ, 1915-ի դէպքերու մասին յայտարարուելիք բոլոր գաղափարները . **«Նոյնիսկ հակառակ գաղափարները»** ընդունելի ու գնահատելի են եւ անոնք երկրին ժողովրդավարութեան զարգացման համար մեծ կարեւորութիւն ունին :

Կարենալ հասկնալու համար թէ ինչո՞ւ համար Վարչապետ Էրտողանին այս ուղերձը կարելոր է, պետք է ծանօթ ըլլալ Թուրքիոյ քաղաքական իրավիճակին: Նախ յիշեցնենք որ Օգոստոսին, Թուրքիոյ մէջ պիտի կատարուի Հանրապետութեան Նախագահի ընտրութիւնը, որ Վարչապետ Էրտողանի համար մեծ կարեւորութիւն ունի: Մեծ հաւանականութեամբ Էրտողան ալ թեկնածու պիտի ըլլայ Նախագահութեան աթոռին: Պարզ է որ ժողովուրդին հակազդեցութեան պատճառ ըլլալիք սխալ մէկ յայտարարութիւն պատճառ պիտի ըլլայ քուէ կորսնցնելու եւ մենք գիտենք որ Էրտողան, իր ամենիք ամէն մեծ որոշումէն առաջ, իր մասնաճիւղին մէջ հմուտ կազմակերպութիւններուն հարցախոյզ ընել կու տայ, շօշափելու համար հանրային կարծիքը, որպէսզի սխալ քայլ մը չնետէ: Այս ալ կը նշանակէ որ թուրք համայնքը այլեւս մեծամասնութեամբ համաձայն է կամ ծանօթ է թէ 1915-ին եւ յաջորդող տարիներուն Թուրքիոյ մէջ հայերու դէմ ոճիր մը գործադրուած է: Չարգացում մը, որ ապագային այս նիւթի շուրջ իրականանալիք Հայ-Թրքական բանակցութիւններու համար խիստ կարեւորութիւն ունի՝ բան մը, որ տասը տարիներ առաջ երազելի իսկ կարելի չէր Թուրքիոյ մէջ:

Ի՞նչ նորութիւններ կրնայ բերել Էրտողանի ուղերձը

Այս ուղերձէն վերջ անելի մեծ թիւով թուրք պատմաբաններ եւ մտաւորականներ կրնան նոր փաստեր մէջտեղ հանելով իրենց կարծիքը յայտնել 1915-ի դէպքերու մասին: Նոյն նիւթի շուրջ բանախօսութիւնները կը շատնան:

24 Ապրիլին Թուրքիոյ մէջ եղած ոգեկոչումներուն մասնակցողներու թիւը օր է օր կը շատնայ: Թորք հայրենակիցներն իսկ անելի մեծ թիւով կրնան մասնակցութիւն բերել ոգեկոչումներուն: Թուրք կամ օտար պատմաբաններ անելի ազատ կերպով կրնան իրենց պրպտումները շարունակել թրքական արխիւներուն մէջ: Ասոնց բոլորն ալ մեծ կարեւորութիւն ունին հանրային կարծիքը այս նիւթի շուրջ կեդրոնացնելու համար:

Քանի որ ըսուած է թէ Հայեր իրաւունք ունին ազատօրէն ապրիլ իրենց ցաւը եւ ոգեկոչել իրենց զոհերը, 24 Ապրիլին մեր եկեղեցիներուն մէջ Ապրիլեան զոհերու համար հոգեհանգիստի արարողութիւններ կրնան կատարուիլ: Մեր ազգային վարժարանները այդ օր կրնան սուգի պատճառով փակ մնալու արտօնութիւն ստանալ, այնպէս ինչպէս կընեն Ճնունդի, Չատիկի եւ Վարդանանցի տօներուն: 24 Ապրիլի զոհերուն համար յուշարձան մը կարելի կըլլայ կառուցանել: Այժմ Թրքական թերթերուն մէջ կը կարդանք թէ կառավարութիւնը աշխատիլ սկսած է պատրաստելու համար նոր օրէնք մը, որպէսզի 1915-ի դէպքերու ժամանակ Թուրքիայէն այլ երկիրներ գաղթողներուն թոռներէն փափաքողներուն թրքական հպատակութիւն տրուի: Օրէնք մը, որ դիւրութիւններ կրնայ բերել «էնվալ ը մէթրուքէ» ի բանակցութիւններու ժամանակ:

Այս ուղղութեամբ Վարչապետ Էրտողանի 24 Ապրիլի առթիւ ըրած ուղերձը, նկատի առնելով վերջին

~~տասը տարիներու ընթացքին 1915-դեպքերու մասին խօսելու, այդ դեպքերը յիշատակելու~~

ազատութեան մէջ կատարուած բարեփոխումներուն եւ փոքրամասնութիւններուն վերադարձուած իրաւունքներուն, շատ կարեւոր ուղերձ մըն է:

Առաջին անգամ Հրանդ Տիկն էր, որ իր կեանքի գիտով լծուեցաւ հայ-թրքագան մերձեցման խնդրին: Վստահ եմ որ եթէ հիմա ինք ողջ ըլլար, ուրախ պիտի ըլլաւ լսելով որ Թուրքիոյ մէջ վարչապետ մը ցաւակցութիւն կը յայտնէ հայերուն 1915-ի դեպքերու համար:

Հարկաւ թէ այս ուղերձը իր կարեւորութիւնը կը կորսնցնէ, եթէ միայն ուղերձ ըլլալով մնայ, այլ պէտք է գայն արժեւորել այս ուղղութեամբ նետուելիք դրական քայլերով ու առնուելիք նոր որոշումներով: Կողմերը պէտք է հեռանան թշնամական զգացումներէ եւ մօտենան իրարու համակրական հասկացողութեամբ: Պէտք է գիտնալ նաեւ որ այս խնդիրը յաղթական ելլելու կամ պարտուած մնալու հարց մը չէ: Ողբերգութեան մը յաղթականը չ'ըլլար:

